

Հենրիկ Աբրահամյան

Պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱՆՑՈՒՄԸ ՄԻԱԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԲԱԶՄԱԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ (1991-2012 թթ.)**

XX դ. ավարտին Խորհրդային Միության և համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումը, նորանկախ պետությունների ձևավորումը անկասկած պատմական կարևոր իրադարձություններ էին: Աշխարհում ձևավորվեց ուժերի նոր հարաբերակցություն, նոր իրավիճակ, իսկ նորանկախ պետությունների զարգացման համար՝ նոր հնարավորություններ ու հեռանկարներ: Սակայն նորանկախ պետությունները միանգամից չէ, որ կարողանում էին ազատվել նախորդ ժամանակաշրջանի բեռից, մշակել կառավարման այնպիսի մի համակարգ, որի կարևոր չափանիշներից մեկը, բազմաթիվ այլ արժեքներից զատ, միակուսակցական համակարգից բազմակուսակցության անցումն էր: Պատմությունը ուսուցանում է նաև, որ մարդկանց հասարակական գիտակցության մեջ կատարվող փոփոխությունները, խմորումները հեշտությամբ չէ, որ կատարվում են: Դրանց համար պահանջվում է երկար ժամանակ, երբ հասարակության որոշ խավերի շրջանում առաջացող գաղափարները աստիճանաբար տիրապետում են նաև մեծ մասին: Նման դեպքում կանգնեցնել այդ գործընթացը այնքան էլ հեշտ չէ, որքան էլ որ երկրի կառավարող վերնախավը հսկայական ջանքեր է գործադրում կանգնեցնելու հասարակության ներքին շերտերում, մարդկանց գիտակցության մեջ կատարվող փոփոխությունները:

Նման իրավիճակ Խորհրդային Միությունում ստեղծվեց 1970-1980-ական թվականներին, երբ առավել ևս ԽՍՀՄ ազգային ծայրամասերում, այդ թվում նաև Անդրկովկասում (Հարավային Կովկաս) սկսվեցին ազգամիջյան հարցերի շուրջ նոր խմորումներ: Այդ նոր երևույթի առավել վառ դրսևորումներից մեկը Խորհրդային Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում սկսված Արցախյան շարժումն էր, որի արձագանքները անկախ Կենտրոնի տված գնահատականից (էքստրեմիստական-ծայրահեղական), հասարակության լայն շրջանակներում տարածում և պաշտպանություն գտավ:

Ներկայացնելով և գնահատելով Խորհրդային Միության տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գործընթացները, հասարակական նոր մտածելակերպը՝ ակադեմիկոս Բ. Տոպորնին այդ օրերի մասին գրում է, որ Խորհրդային Միությունը այն ձևով, որով նա ձևավորվել էր նախորդ տասնամյակների ընթացքում, չէր բավարարում նրա մեջ մտնող հանրապետություններին: Ձևավորվել էր միմյանց հակադրվելու յուրօրինակ մի կարծրատիպ, երբ Միությունը չէր դիտվում որպես հանրապետությունները միավորող, ինտեգրող և նրանց շահերն արտահայտող մարմին, այլ ավելի շատ դիտվում էր որպես օտար ուժ, որը կտրված էր իր սուբյեկտներից՝ իր

անչափ կենտրոնացված, բյուրոկրատական մեծ ապարատով¹: Դժվար չէ տեսնել, որ մեր հանրապետությունում ևս ձևավորված հասարակական մթնոլորտի դրսևորումներից մեկն այն էր, որ առաջացավ անդունդ Հայաստանի կոմկուսի, նրա ղեկավար մարմինների և հասարակության այն անդամների միջև, ովքեր պաշտպանեցին շարժման ալիքի վրա ձևավորված «Ղարաբաղ կոմիտեին»: Եվ քանի դեռ երկրի ղեկավարությունը, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հատկապես կուսակցական վերնախավը (Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյան) պատրաստ չէին որևէ զիջման և ամեն ինչ անում էին կանխելու ներքևից եկող նախաձեռնությունները, հրապարակային ելույթները, կազմակերպություններ ստեղծելու փորձերը և այլն, ուստի հակասությունները վերևների և ներքևների (ժողովրդի) միջև խորանում էին: Այդ տեսակետից հետաքրքիր է ներկայացնել Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոյի 1988 թ. մարտի 23-ին ընդունած որոշումը՝ «Հանրապետության քաղաքներում, շրջաններում քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվող զանգվածային միջոցառումների, ժողովների անցկացման ժամանակավոր կանոնների մասին»², որում բավական հանգամանորեն վերլուծված է քաղաքացիների կողմից կազմակերպվող ժողովների, փողոցային երթերի, հրապարակային հավաքների և այլ կարգի զանգվածային միջոցառումների անցկացման կարգը, որն ավելի շատ հանգում էր դրանց արգելմանը, քանզի միայն համապատասխան մարմինների կողմից թույլտվության դեպքում կարող էին նման միջոցառումներ անցկացնել, որոնց թույլտվություն ստանալը անչափ դժվար էր, եթե ոչ՝ անհնար: Եվ որպեսզի իրոք կանխվեին նման միջոցառումները, ՀԿԿ Կենտկոմի բյուրոն նույն նիստում (արձ. № 71) քննարկեց «Ղարաբաղ կոմիտեն անօրինական ճանաչելու մասին» հարցը, որտեղ նշվում է, որ այսպես կոչված «Ղարաբաղ կոմիտեի» գործունեությունը չի համապատասխանում Խորհրդային Հայաստանի Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը: ՀԿԿ Կենտկոմի բյուրոն միաժամանակ նշում է, որ «Ղարաբաղ կոմիտեի» աշխատանքը ձեռք է բերել քաղաքական վտանգավոր բնույթ և հակասում է ժողովրդի շահերին: Կենտկոմի բյուրոն, ելնելով դրանից, ընդունել է որոշում. ա) ճանաչել այսպես կոչված «Ղարաբաղ կոմիտեն» անօրինական և դադարեցնել նրա գործունեությունը, բ) հավանություն տալ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշման նախագծին, որը ևս կցված է նույն արձանագրությանը³:

Բայց քանի որ երկրում դեպքերի զարգացումը դուրս էր գալիս Կենտրոնի վերահսկողությունից և ինչ-որ իմաստով դառնում անկառավարելի, ԽՍՀԿ Կենտկոմը 1989 թ. հունվարի 30-ին ընդունեց որոշում, «ԽՍՀԿ քաղաքական կառուցվածքի դեմ հակասոցիալիստական օպոզիցիոն (ընդդիմադիր) տարրերի հակազդեցության դեմ միջոցառումներ մասին», որի կենսագործման համար ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1989 թ. ապրիլի 4-ին ևս ընդունեց համապատասխան որոշում՝ հանձնարարելով Կենտկոմի քարտուղարներ Օ. Ի. Լոբովին, Գ. Ա. Գալոյանին և մյուս պատասխանատու աշխատողներին տվյալ հարցի վերաբերյալ որոշման նոր նախագիծ կազմել և ներկայացնել քննարկման⁴: Խոսվում է նաև այն մասին, որ որքան էլ Գորբաչովյան վերա-

¹ Տե՛ս **Топорнин Б. Н.**, Новый Союзный договор: Теоретические подходы. Трудные поиски решений. М., 1990, с. 9:

² Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 21, թ. 47-52:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 9, թ. 19:

կառուցումը փորձում էր շատ հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ առաջարկել՝ ժողովրդավարություն, հրապարակայնություն և այլն, այնուամենայնիվ իրական կյանքը թե՛ Միությունում, թե՛ Խորհրդային Հայաստանում հեշտությամբ չէր փոխվում, որը հնարավորություն կտար մարդկանց ըստ իրենց նախասիրությունների ստեղծել քաղաքական կուսակցություններ, բարձրաձայն խոսել իրենց հայացքների մասին, ձևավորել պաշտոնական գաղափարախոսությանն ընդդիմադիր շարժումներ, այլընտրանքային հոսանքներ և այլն: Սակայն անկախ Կենտրոնի և հանրապետության ղեկավարության նման հարցերի նկատմամբ կարծր, մերժողական դիրքորոշումից, միևնույն է, երկրի ընդերքում ձևավորվում էին նոր շարժումներ, հոսանքներ և նոր կազմակերպություններ: Դեռ ավելին, Խորհրդային Միության տարիներին Խրուշչովյան ձնհալի պայմաններում սկսվեց այլախոհական շարժում: 1966 թ. Երեվանում, հույժ գաղտնի պայմաններում, ստեղծվել է Ազգային միացյալ կուսակցություն (ԱՄԿ)՝ նկարիչ Հայկազ Խաչատրյանի նախաձեռնությամբ, ով մինչև 1968 թ. եղել է կուսակցական ղեկավար: Նա 1967 թ. կազմել է կուսակցության ծրագիր-կանոնադրությունը, իսկ արդեն 1968 թ.՝ ձերբակալվել: 1968 թ. կուսակցության փաստացի ղեկավարը Պարույր Հայրիկյանն էր, որքան էլ որ երկար տարիներ գտնվել է անազատության մեջ¹: 1973 թվականին նա արդեն ԱՄԿ Խորհրդի ընտրված ղեկավարն էր: Ազգային միացյալը կոչվում էր կուսակցություն, սակայն իրականում ոչ թե կուսակցություն էր, այլ ազգային ճակատ՝ Հայաստանի անկախության կողմնակիցների անկախականների միավորում: Թեև ԱՄԿ-ի առաջնահերթ խնդիրը Հայաստանի անկախությունն էր հանրաքվեի՝ ժողովրդավարական ճանապարհով: Կազմակերպությունը իր կարևորագույն խնդիրներից էր համարում Հայաստանում բազմակուսակցական համակարգի ստեղծումը: 1976 թ. տպագրված «ԱՄԿ-ն իր գոյության 10-րդ տարում» հոդվածաշարում կարդում ենք, որ Հայաստանի անկախացումից հետո ԱՄԿ-ն պետք է տրոհվի տարբեր կուսակցությունների՝ դրանով նպաստելով բազմակուսակցության ձևավորմանը Հայաստանում: Տարիներ անց այդպես էլ եղավ: Ընդհատակից դուրս եկած և 1987 թվականից որպես Ազգային ինքնորոշում միավորում հանդես եկող ԱՄԿ-ի հիման վրա 1989-90 թթ. Հայաստանում ստեղծվեցին մի շարք քաղաքական կազմակերպություններ: Այդ փուլում ԱՄԿ-ԱԻՄ ղեկավար Հայրիկյանը արտասահմանում էր: Մոսկովյան իշխանությունները 1988 թ. հուլիսին նրան հատուկ օդանավով բռնի արտաքսել էին Եթովպիա: Այդ նույն ժամանակ հանրապետությունում ձևավորվում են նաև այլ կազմակերպություններ՝ Ազգային միասնության ուխտ և այլն, որոնք էլ առարկայական նախադրյալներ էին ստեղծում հետագայում բազմակուսակցության ձևավորման համար:

Այս գործում որոշակի է նաև «Ղարաբաղ կոմիտեի» դերը, որը 1988 թ. օգոստոսին անհրաժեշտ համարեց կազմակերպական ձև տալ համաժողովրդական շարժմանը և այն անվանել Հայոց համազգային շարժում: Որքան էլ 1988 թ. դեկտեմբերի երկրաշարժից հետո «Ղարաբաղ կոմիտեի» շատ մասնակիցներ, ղեկավարներ ձերբակալվեցին, միևնույն է կանգնեցնել շարժումն այլևս անհնար էր: Այն նոր թափ ստացավ «Ղարաբաղ կոմիտեի» առանջնորդներին բանտից ազատելուց հետո: 1989 թ. նոյեմբերի 4-7-ը Երևանում հրավիրվեց Հայոց համազգային շարժման առա-

¹ Տե՛ս ԳԳ Ազգային արխիվ, Պարույր Հայրիկյանի անձնական ֆոնդ, ֆ. 1450, գ. 1, թ. 20-34: **Պարույր Հայրիկյան**, Ազգային միացյալ կուսակցություն. Ծրագիր, կանոնադրություն և պարագայք, 1974 թ., Երևան, 1991 թ.: Անկախության ճանապարհի երեք վավերագրեր, Երևան, «ԱԻՄ» հրատարակչություն, 1997 թ.:

ջին համագումարը, որը նոր երևույթ էր գործող կոմունիստական համակարգի պայմաններում: Իսկ երբ արդեն 1990 թ. մայիսի 20-ին Հանրապետությունում կայացած ընտրություններում, որոնք Խորհրդային Միության պատմության մեջ մրցակցային հիմքի վրա անցկացված առաջին ժողովրդավարական ընտրություններն էին, Կոմունիստական կուսակցությունը պարտություն կրեց, որը խթանիչ դեր կատարեց Հայաստանում բազմակուսակցական համակարգի հաստատման համար: Իշխանության եկավ Հայոց համազգային շարժումը¹:

Գալով իշխանության՝ այն որդեգրեց անկախ պետականություն ստեղծելու գործընթացը, որի գաղափարները դրսևորվեցին 1990 թ. օգոստոսի 23-ի Գերագույն Խորհրդի ընդունած Հայաստանի անկախության հռչակագրում: Նրանում, բազմաթիվ այլ հիմնախնդիրների շարքում, կարևորվում էր խոսքի, մամուլի, խղճի ազատության ապահովումը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը և, որ կարևոր է, կուսակցությունների իրավահավասարության, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացումը²: Իսկ արդեն 1991 թ. փետրվարի 26-ին «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»³ օրենքով հանրապետությունում սկսվեց անցում կատարվել միակուսակցական համակարգից բազմակուսակցական համակարգի:

Նույն երևույթը բնորոշ էր նաև հետխորհրդային մյուս հանրապետություններին, սակայն նրանցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատկությունները:

Մեր հանրապետությանը բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ երկիրը երկար տասնամյակներ ապրելով միակուսակցական համակարգում և այժմ ստանալով հնարավորություն ըստ իր նախասիրությունների ստեղծելու կազմակերպություն, կուսակցություն և այլն, մի ծայրահեղությունից ընկավ մեկ այլ ծայրահեղության մեջ: Սկսվեց, այսպես ասած, «առաջնորդացավով» ապրելու մի շրջան, երբ ամեն ոք, որ տառապում էր լիդերության ցավով, ցանկանում էր ստեղծել կուսակցություն: Դա է պատճառը, որ հատկապես առաջին տարիներին իրար հետևից ստեղծվում էին բազմաթիվ կուսակցություններ, որոնք հաճախ իրար կրկնում էին, իրար նման էին և որևէ դեր չունեին հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում: Օրինակ, 1991 թ. հանրապետությունում գործելու իրավունք ստացան 12 կուսակցություններ, իսկ հետագայում դրանց թիվն ավելացավ՝ առանձին տարիներին անցնելով 100-ի սահմանը:

Ընդհանրապես համաշխարհային պատմության փորձը հաստատում է մի կարևոր երևույթ, ըստ որի ճանաչում, հեղինակություն չունեցող կուսակցությունները ձուլվում են ավելի ուժեղ, ազդեցիկ կուսակցություններին: Այդ երևույթը բնորոշ է նաև միակուսակցական համակարգից բազմակուսակցության անցնող Ռուսաստանի Դաշնությանը, որտեղ տարբեր կուսակցություններ, չհամապատասխանելով կուսակցություններին ներկայացվող պահանջներին՝ ունենալ ոչ պակաս 50000 անդամ և առնվազն 45 շրջանային բաժանմունքներ՝ յուրաքանչյուրում 500 անդամ, դադարեցնում են իրենց գործնելությունը կամ էլ վերափոխվում են հասարակական շար-

¹ **Հայկ Ս. Քոթանջյան**, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության համատեքստում, Երևան, 2008 թ., էջ 50:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995 թ., էջ 9:

³ Նույն տեղում, էջ 115-118:

ժուռների: Այդ գործընթացը մեր հանրապետությունում մի փոքր ավելի դանդաղ է տեղի ունենում:

Հայաստանում գործող բազմաթիվ կուսակցությունների առկայությունը ժողովրդավարությանը նպաստող կարևոր գործոններից մեկն է, որը ամրագրվել է 1995 թ. և 2005 թ. լրացված, փոփոխություններով ընդունված Սահմանադրությունում: Նրա 7-րդ հոդվածում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կյանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործնությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին¹: Իսկ ընդհանրապես ժողովրդավարությանը, միակուսակցական համակարգից բազմակուսակցության, բազմակարծության համակարգի անցմանը նախորդել և հետևել են բազմաթիվ նմանատիպ այլ որոշումներ. «Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին 1991 թ. փետրվարի 26-ի ՀՀ օրենքը»², «Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը կիրարկելու մասին, «ՀՀ սեփականաշնորհման հիմունքների մասին», «Հանրաքվեի մասին», «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», «ՀՀ պետական սեփականության մասին», «ՀՀ անկախության հռչակագրի ընդունման առթիվ ամենիստիայի մասին», «ՀՀ անկախության հռչակման տարեդարձի առթիվ ամենիստիայի մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին», «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին»³ և այլն, որոնք կոչված էին նպաստելու հանրապետության առջև ծառայած անցումային շրջանի բազմաթիվ խնդիրների լուծմանը և, որ կարևոր է, ժողովրդավարության անցմանը:

Խոսելով ժողովրդավարության մասին՝ քաղաքական կուսակցությունների ճանաչված հեղինակություն Մորիս Դյուբերժեն իր «Քաղաքական կուսակցությունները» (Մոսկվա, 2007 թ.) հայտնի աշխատությունում գրում է, որ իրական ժողովրդավարությունը ոչ այլ ինչ է, քան համեստ մի բան: Այն որոշվում է առաջին հերթին ազատությամբ ժողովրդի համար և ժողովրդի յուրաքանչյուր մասի համար: Ընդ որում՝ ազատություն ոչ միայն իրենց ծագմամբ, ունեցվածքով, պաշտոնով, կրթությամբ, այլ իրական ազատություն բոլորի համար, որը ենթադրում է կյանքի որոշակի մակարդակ, որոշակի ընդհանուր կրթություն, որոշակի սոցիալական հավասարություն և քաղաքական իրավահավասարություն⁴:

Մինչդեռ իրողությունն այն է, որ դեռ ԽՍՀՄ տարիներին հաստատված ամբողջատիրական համակարգը արգելակում և կաշկանդում էր քաղաքացիների նախաձեռնությունը: Եվ որքան էլ ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծվեցին նոր պայմաններ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար՝ անցնելու ժողովրդավարության, բազմակուսակցության ձևավորմանը և այլն, իրականությունն այն է, որ նման անցումը անչափ դժվար է և բավական երկար ժամանակ պահանջող խնդիր:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Երևան, 2005 թ., էջ 6:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածուն (1990-1995 թթ.), Երևան, 1995 թ., էջ 115-118:

³ Նույն տեղում, էջ 23-29, 45-49, 109, 118-119, 119-130, 136-140, 435-436, 839-865:

⁴ Տե՛ս **Морис Дюверже**, Политические партии, М., 2007, с. 494.

Վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում հետխորհրդային տարիներին կատարվող նոր իրողությունները, նոր մթնոլորտը՝ Ազգային ժողովի նախկին խոսնակ Տիգրան Թորոսյանը իր «Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա» աշխատությունում (Երևան, 2006 թ.) նշում է, որ նախկին խորհրդային հանրապետություններում ձևավորված կուսակցական համակարգերը հաճախ անվանվում էին քվադի բազմակուսակցական և դեռևս գտնվում էին սաղմնային վիճակում: Բայց հեղինակը միաժամանակ լավատեսորեն այն միտքն է զարգացնում, որ դրանք հնարավորություն ունեն զարգանալու և վերափոխվելու իսկական ժողովրդավարական կուսակցական համակարգի¹: Սակայն Հայաստանի Հանրապետության անկախության ավելի քան 20 տարիները ցույց տվեցին, որ անչափ դժվար է հանրապետությունում ձևավորել ժողովրդավարական, բազմակուսակցական այնպիսի մի համակարգ, որտեղ բազմակուսակցությունը իրոք ծառայի իր նպատակին, իր կոչմանը, որտեղ իշխանություն-ժողովուրդ և հակառակ փոխհարաբերություններում իշխի փոխադարձ վստահություն, որտեղ քաղաքացին իրեն պաշտպանված զգա անօրինություններից, կամայականություններից, իր իրավունքների ոտնահարումից, բյուրոկրատական ապարատի ճնշումներից և այլն: Դժվար չէ համոզվել, որ հանրապետությունում գործող նրանց և հանրությանը ներկայացող կուսակցությունները անչափ հեռու են իրենց ծրագրերում հռչակած սկզբունքներից, որն էլ արդարացիորեն ծնում է անվստահություն, թերահավատություն և անտարբերություն թե՛ նրանց և թե՛ նրանց հռչակած կարգախոսների ու խոստումների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող բազմակուսակցական համակարգի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ անկախության համար պայքարի առաջին տարիներին, երբ մարդկանց մեծ մասի շրջանում գերիշխում էր համընդհանուր ոգևորություն, հավատ քաղաքական նոր ուժերի, քաղաքական վերնախավի նկատմամբ, ժամանակի ընթացքում այդ ոգևորությունն սկսեց անկում ապրել, մանավանդ, երբ գրեթե բոլոր կուսակցությունների շարքերում, հատկապես իշխող, սկսեցին առաջանալ հակասություններ, անհամաձայնություններ, որոնք կարճ ժամանակամիջոցում հանգեցրին կուսակցությունների պառակտմանը: Օրինակ, իշխող կուսակցությունից՝ Հայոց համազգային շարժումից, անջատվեցին և ձևավորվեցին մի քանի նոր կուսակցություններ՝ Ազգային ժողովրդավարական կուսակցություն (Վազգեն Մանուկյան), Ազգային ժողովրդավարների դաշինք (Արշակ Սադոյան), Ազգային ժողովրդավարական կուսակցություն (Շավարշ Քոչարյան) և այլն: Նույն երևույթը բնորոշ էր նաև երկար տարիներ երկրի միակ կառավարող կոմունիստական կուսակցությանը, որից ծնվեցին արհեստածին նոր կոմունիստական կուսակցություններ՝ Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն (Վազգեն Սաֆարյան), Հայաստանի միավորված կոմունիստական կուսակցություն (Յուրի Մանուկյան) և այլն:

Տարանջատման այդ երևույթը ոչ այնքան տարբեր հարցերի շուրջ գաղափարական, տեսական տարածայնություններն էին, այլ ավելի շատ առաջնորդացավը և եսասիրությունը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը տառապում էր փառասիրությամբ և ձգտում էր լինել առաջինը: Մինչդեռ նման հանգամանքը ոչ թե նպաստում էր բարձրացնելու կուսակցությունների հեղինակությունը, այլ հակառակը՝ հանգեց-

¹ Տե՛ս **Տիգրան Թորոսյան**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Երևան, 2006, էջ 136:

նուն էր նրանց հեղինակագրկմանը: Իրականում մարդիկ կուսակցության առաջ-
նորդների մեջ տեսնում էին ոչ թե իրենց գործի մվիրյալների, այդ գաղափարներով
ապրողների, այլ ավելի շուտ՝ եսասերների: Դա է պատճառը, որ հաճախ շատ կու-
սակցություններ շարունակում են մնալ սոսկ թղթի վրա գրված կուսակցություններ,
որևէ դերակատարություն չունեն երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Այս հարցում մյուս առանձնահատկությունն այն է, որ որոշ կուսակցություններ
դառնալով իշխող, կառավարող կուսակցություն, իրենց շարքերում ունենում են ոչ
այնքան կուսակցության գաղափարները կրողներ, կուսակցության գաղափարներով
ապրողներ, այլ կուսակցությունը որպես «տանիք» դիտողներ՝ իշխանական բուր-
գում հայտնվելու կամ մնալու, ինչպես ասում են՝ տաքուկ տեղ ունենալու համար:
Նման հանգամանքը ազդում է կուսակցության հեղինակությանը, ստվեր գցում նրա
վրա, մանավանդ եթե կուսակցության շատ անդամներ այնքան էլ տեղյակ չեն, թե
ինչ է դավանում իրենց կուսակցությունը, որոնք են նրա գաղափարները և այլն: Եթե
նման շատ արատավոր երևույթներ բացատրվում են այն հանգամանքով, որ հնի
քանդման և նորի ձևավորման ժամանակ, երբ երկրում տիրում էր դեռևս խառ-
նաշիտ, քառսային վիճակ, երբ դեռ քաղաքական կրքերը չէին հանդարտվել, հըս-
տակեցվել և այլն, ապա երբ արդեն այդ ամենը մնացել է ետևում, այժմ անհրաժեշտ
է, որ յուրաքանչյուր կուսակցություն հստակ որոշի իր տեղը, իր դերակատարությու-
նը երկրի, հանրապետության առջև ծառայած խնդիրների լուծման գործում: Կու-
սակցությունների համար այդ հաղթաթուղթը նրանց ծրագրերն ու պատկերացում-
ներն են երկրի զարգացման ուղիների մասին, երկրի ներկայի և ապագայի մասին:
Այս հարցում, ցավոք, կան շատ թերություններ, անկատարություններ: Առավել ևս
երբ ծանոթանում են տարբեր կուսակցությունների ծրագրերին, որոնք գրեթե իրար
նման են և հաճախ կրկնում, նմանակում են իրար, որովհետև մարդկությունը այդ-
քան գաղափարներ, հասարակության զարգացման այդքան տարբեր ուղիներ չի
մշակել, չի հնարել: Եվ որքան էլ մեր երկիրը, մեր ժողովուրդն ունի իր յուրօրինակ
պատմությունը, իր յուրահատուկ անցյալը, որը որոշակի հետք է թողել նրա հոգեբա-
նության, մտածելակերպի վրա և այլն, այնուամենայնիվ նրան բնորոշ է եղել քաջա-
տեղյակությունը համաշխարհային, համամարդկային քաղաքական, մշակութային,
գիտական մտքին, նրա զարգացումներին, մշակել է իր սեփական աշխարհընկալու-
նը, զարգացման, զոյատևման իր հայեցակարգը, որի կենսագործունը մեծ չափով
հնարավոր է ազգի, ժողովրդի, համախմբման, համերաշխության և միասնական
գործելու դեպքում, որն այսօր առավել քան երբեք անհրաժեշտ է և հրամայական:
Այդ իմաստով ներկա ժամանակաշրջանում հանրապետությունում գործող ավելի
քան 75 կուսակցություններն ամենևին չեն նպաստում երկրի առջև ծառայած խըն-
դիրների լուծմանը, երկիրը ժողովրդավարության ուղիով զարգացնելու անչափ կա-
րևոր գործին:

Շարքային քաղաքացու, անհատի համար այնքան էլ հասկանալի չեն այն ներ-
կուսակցական և միջկուսակցական տարածայնությունները, խմորումները, միմյանց
նկատմամբ անհամդուրժողականությունն ու թշնամանքը, որոնք ավելի են խորա-
նում և բորբոքվում խորհրդարանական, առավել ևս նախագահական ընտրություն-
ների ժամանակ՝ հաճախ հանգելով անորոշ վիճաբանությունների և հանրապետու-
թյունում անառողջ մթնոլորտի ստեղծմանը:

Պետք է հասկանալ, որ կուսակցությունների ստեղծումը ինքնանպատակ չէ, այլ երկրի ուժերը համախմբելու և երկրի առաջընթացը ապահովելու պատրաստակամություն:

Генрих Абрамян, Переход от однопартийной к многопартийной системе в Республики Армении в переходный период как наиболее важный фактор демократии. - В статье автор рассматривает необходимость более глубокого научного переосмысления истории развития от однопартийной к многопартийной системе в советском и постсоветском обществе и в этом плане представляет сравнительный подход к изучению данного вопроса в армянской действительности. Автор одним из первых анализирует переход к многопартийной системе, а также исследует типичные для переходного периода проблемы разветвления и роста количества партий в Армении.

Henrik Abrahamyan, The transition from one-party to multi-party system in Armenia during the transition period, as the most important factor of democracy. - The article considers the fact that at present there is more need for more scientific rethinking of the history of the development from one-party rule to a multiparty system in the Soviet and post-Soviet societies and in this respect presents a comparative approach to this issue. The author is of one of the first to analyze the transition to a multiparty system, and to explore the typical transition issues of branching and growth of political parties in Armenia.

